



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

894.362

U-12

ՄԻՐԶԱ ԱԼԻ ԱՔՊԵՐ ԹԱՀԻՐ ԶԱԴԵ

Ս Ա Ք Ի Ր

ՀՈՓ-ՀՈՓ ՆԱՄԵ

894

Ս-12

Ա. Կ. (Բ) Կ. Բ. Կ.-ԿԵԳ
«ԲԱԿՆՍԿԻ ԲԱՐՈՉԻ»
ՈՊԵՐԱՏԻՎ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹ.
1926 Քաղու

394.362

Ս Ա Ռ Ի Ր

Ս-12

առ

Հ Ո Փ - Հ Ո Փ Ն Ա Մ Ե

(Բանաստեղծությունների ժողովածու)

Թուրքերենից հայերենի վերածեց

Ա Մ Ե Ռ

Գրքին կցված կա բանաստեղծ Միրզա Ալի Աբալեր Սաբիրի կենսագրությունը, կազմված հրատարակչության խմբագրության կողմից:

Ա. Կ. (բ) Կ. Բ. Կ.-կից

«ԲԱԿԻՆՍԿԻ ԲԱՅՈՉԻ»

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹ.

1926 Բագու

25 JUL 2013

73.877

Ծպագրված է
 Ա. Կ. (բ) Կ. Բ. Կ. Կից
 «ԲԱՆԿԻՆՍԿԻ ՐԱԲՈՉԻ»:
 Կոտայ. հրատ. տպարանում



Ազգ. 3811

Պատվեր № 125

Տիրաժ 3000



Ա Ա Բ Ի Ր — ծն. 1862 թ. մեռել 1911 թ.



ՄԱՔԻՐԻ ՀՈՒՇԱՐՉԱՆԸ ԲԱԳՎՈՒՄ.
(Կանգնեցված է 1922 թ. ապրիլի 28-ին)

ՍԱՒԻՐ ԹԱՀԻՐ ՉԱՆԵ.

(Կենսագրութիւն)

23 հունիսի 1862 թ.—12 հուլիսի 1911 թ.

Իր գործերի մի մասով հայ հասարակութեան ծանոթացվող բանաստեղծի լրիվ անունը Մեշեղի Միրզա Ալեքրեր՝ և ազգանունն էլ Թահիր Չաղե յե. բայց մինչև այժմ բանաստեղծը հայտնի յե Սարիբ անունով և գրած գործերից ամենահայտնին «հոպոպնամե» ն (հոպոպի գիրք) և: Այդ անունը առաջ է յեկել նրանից, վոր հեղինակը ծածկում էր իրեն հալածող հասարակութիւնից իր ուլ լինելը և հոպոպը*) նրա գործ ածած կեղծ անուններից մեկն է, վորոնց նա հաճախ փոխում էր:

Այժմ անցնենք նրա կենսագրութեան.—

Սարիբը ծնվել է 1862 թ. Շամախի քաղաքում: Մինչև 13—14 տարեկան հասակը սովորել է տեղի դպրոցներում, իսկ հետո, հակառակ նրա ցանկութեան, հայրը տարել էր նրան յուր խանութը ոգնութեան: Հայրը արհեստով սապոն յեփող էր: Սարիբը փոքր հասակից սկսեց բանաստեղծութիւններ գրել և նրա

*) «Մոլլա Նասրեղլին» ժուրնալում հրատարակած նրա առաջին վոտանավորները լույս են տեսել «հոպոպ» կեղծ անունով: Նրա մահից հետո, համաձայն նրա ցանկութեան, 1912 թ. հրատարակված բանաստեղծութիւնները «հոպոպ նամե» յեն կոչվել: զրա համար էլ հայերենի թարգմանված նրա վոտանավորների վերնագիրը «հոպոպ նամե» թողինք:

ուսուցիչը, Սեյիդ Ազիմը*), նրա մեջ այս ցանկության զարգացման զարկ է տվել:

Խանութ գալով հնարավորության սահմաններում ձեռքից գիրքը բաց չթողնող Սաբիրի և խավարամիտ հոր միջև հարաբերությունները անտանելի էյին դառնում: Այդ պատճառով պատանեկության ժամանակ Սաբիրը մի քանի անգամ անհաջող փորձեր է արել հայրական տանից փախչելու և վերջապես միայն 23 տարեկան հասակում նրան հաջողվում է Արևելյան մուսուլմանական յերկրները անցնել և մի վորոշ ժամանակ ապրել այնտեղ: Իր ճամբորդության ժամանակ նա փերեզակությամբ (չարչի) է պարապել: Հոր մահվանից հետո վերադառնում է Շամասի, ամուսնանում է և յուր մեծ ընտանիքը (8—9 հոգի) պահելու համար ստիպվում է հոր արհեստը շարունակել:

Սաբիրը հարուստ է առանձնահատուկ նշաններով, վորոնցով հին ժամանակը վարձատրում էր այն բոլոր մեծ մարդկանց, վորոնք համարձակություն էյին ունենում մենակ գնալու իրենց ընտրած ճանապարհով:

Ինչպես վերևում ասված է, նա դմակ հալելով սապոն էր յեփում, բայց յեկավ ժամանակ, յերբ մսագործները դադարեցին նրան դմակ ծախել, նա էլ արհեստը փոխելով սկսեց ուսուցչությամբ պարապել: Կյանքում Սաբիրի յերեսին անարգանք հասցնողները և նրան թակողները քիչ չեն յեղել: Յեվ նույնիսկ նրա մահն էլ առաջացել է նրանից, յերբ մի մարդ (իրա փեսան) ատրճանակով նրա վրա հարձակվելով նշան բռնեց, Սաբիրը վախից ուշաթափ յեղավ և ապա մահացավ:

Նրա կրթությունը ամբողջությամբ ինքնազարգացման ար-

*) Սեյիդ Ազիմ Աղրբեջանի մեծագույն բանաստեղծներից մեկն է, նրան կհատկացվի առանձին գրքույկ, վորը թարգմանվել է Գ. Հայկունու կողմից:

դուռնք է, և նրա գրած յերկերի մահացու քննադատող միտքն էլ ըրջապատի և կյանքի անմիջական ուսուսնասիրության արդյունքն է. Սաբիրը շովինիստ չէր և չէր կապված հառաջադիմության թշնամաբար տրամադրված հոսանքներին: Սաբիրի գրածների մեջ ամենահաջողները և ամենարժեքավորները նրանք չեն, վորոնք նկարագրում են նրա հետապնդած հասարակության իրգեալները, այլ նրանք վորոնք այդ քանդվելու արժանի հասարակության ամոթանքները յերեսին խփող բանաստեղծական քննադատություններ են: Մեծ բանաստեղծը յուր բոլոր յերկասիրությունները ստեղծելու ժամանակ մեծ մասամբ չէր ջոկում, վոր այս կամ այնը ասելով՝ նա դուրս էր գալիս կապված այս կամ այն քաղաքական և այլ հոսանքների:

1922 թ. 28 ապրիլի, Աղրբեջանի Խորհրդ. յերկրորդ համազումարի անդամների մասնակցությամբ, Սաբիրին, Կոմմունիստական փորցում (նախկին Նիկոլայան), արձան կանգնեցվեց և հրապարակն էլ նրա անունով Սաբիրի հրապարակ անվանվեց:

Սաբիրը ուշիմ, աշխատասեր սոցիալական յերգիչ է, աչք չփակելով նրա և վոչ մի թույլ կողմի վրա, մենք ասելու ենք, վոր նրա գործերի մեջ կենտրոնացված են ամենաբյուրեղացած և գրական արտահայտությունները այն շարժումների, վորոնք ցույց են տալիս Աղրբեջանի թրքության պատմական կենսունակությանը 1904—1917 թվ.:

Յեվ վորպեսզի լրիվ պարզենք ընթերցողին, թե սրանով մենք ինչ ենք ուզում ասել, հարկավոր է ավելացնել մի քանի խոսք: Այս մի քանի խոսքերում հարկավոր է շոշափել Սաբիրի վերաբերմունքը այն հասարակական պրոբլեմներին, վորը (յեթե նա պարզված է) կարող է առհասարակ վորոշակի պարզել նրա գիրքը հատարակական այն հարցերի նկատմամբ, վորոնք առաջադրվում էյին նրան իր ժամանակի կողմից:

Այդպիսի հարցեր Սարիբի ստեղծագործութեան մեջ պետք է համարել կանանց և բանվորական հարցերը:

Սարիբի այն բանաստեղծութիւնները, վորոնք նվիրված են Բագվա բանվորներին և վորոնց ընթերցողը կգտնի այս գրքույկում, անժխտելիորեն վկայում են, վոր այդ բանաստեղծութիւնները, վորոնք դեռ չեն գերազանցվել Սարիբի հաջորդների կողմից մինչև այժմ ել, հանդիսանում են արտահայտիչը այն բանի, —ինչպես վերևում արդեն ասել ենք—վոր Սարիբը յերկար չը մտածելով, անվերապահորեն հարում եր նրանց, վորոնք համարձակութիւն են ունեցել «Փալազի չարիւր շրջելու»:

Յեւ յեթե մենք ունենայինք ապրիորիկ ցանկութիւն, չգիտեմ ինչու, անվանել նրան «ավարա», բայց այդ զեպքում, համեմատաբար մի վորքիկ աշխատանք այդ բանաստեղծութիւնների ուսումնասիրութեան վրա, մեզ կոգնի հասկանալու և իմանալու, վոր այնտեղ, ուր խոսքը գնում և կոնկրետ հասարակակալ շարժման ելական պահանջների մասին, այնտեղ Սարիբը անվերապահորեն պրոլետարիատի և նրա ընտրող ուսմունքի—սոցիալիզմի կողմն է: Ավելին, վորպես արդյունք դրան նա յերբեմն ուղղակի ժխտում և Աստուծոն, նրա շեղելովից «ինչ կանեյիր դու ով յարար» հատկապես հետևալ մասը այդ ցույց և տալիս.—

Բազի, արտի բարաքյաթը, թե վոր բեզը պիտի ուտեր,
Բա ցանսողը՝ քար ու փեփ ու կր... են ինչ եյիր անում, աստված ...

Աշխատանքը ղնչպարին ա, ուժը՝ յեզան, հողը քոնն ա՝
Բեզգադաներ, խան ու բեզեր՝ ել ինչ եյիր անում, աստված ...

Տգիտութիւն ու խավարը, սաղ աշխարհը թե կը պատեր՝
Են սրտացավ, գրքի մարդեր, ել ինչ եյիր անում, աստված ...

Այստեղ Սարիբը, ինչպես ընթերցողը տեսնում և, թվում է նույն սոցիալական «ինչու ն», վորի պատասխանները նրա մոտ միանգամայն պարզ են: Արդեն հարցի դրույթը պարզ ցույց է տալիս նրա վերարեմունքը այդ հարցերին և մենք իրավունք ունենք սպասելու, վոր անա Սարիբը կասի այն խոսքը, վորը միայն կարող է լրացնել ու պտակել նրա ամբողջ սոցիալական աշխարհայացքը. բայց ավնղ.

Տեր վողորմած, տեր վողորմած, տեր վողորմած.

Քու գործերով, հիանում եմ բերանա բաց...

Մենք իրավացի ենք համարում մեզ ասելու, վոր Սարիբը «ինչ կանեյիր դու յարար» վոտանավորի մեջ թվածները շեշտելով հնարավոր է համարում նրանց իրականացմանը ձգտել, չը նայած այն բանին, վոր նա չեր գիտակցում, թե կրոնի հարցն ել պետք է նույնքան կարուկ կերպով լուծել, ավելի ուղիղ, նա չեր հասկանում կրոնի և հեղափոխութեան հարցերի լուծման մեջ անհրաժեշտ սերտ կապը: (Մենք արդեն շատ հին ժամանակներից գիտենք, վոր «զարմացումը փիլիսոփայութեան մայրն է»).

Կամ թե վերցնենք կանանց հարցը.—

Հայ ընթերցողի համար ընտրված Սարիբի բանաստեղծութիւնների մեջ քիչ չեն վոտանավորներ, վորտեղ Սարիբը (վորը բանաստեղծութիւններ գրելու համար այնքան անգթորեն հալածվում եր իր սեփական կնոջ կողմից) և առաջին անգամ և լըրիվ նկարագրում է նրանց կյանքը: Նա իր գրչով այնքան շատ է արել, վոր Սարիբին արդարացի համարում են Ադրբեջանի կանանց պաշտպանը, և միաժամանակ մենք կարող ենք ասել, վոր Սարիբը ուներ նույնպես նման վոտանավորներ.—

Դրախտը—մայրերի վոտքերի տակն է. և այլն և այլն.

(Մոհամեդի խաղիս)

Այստեղ մի յեզրակացութիւն կարող ե անվել, և մենք մը-
տածում ենք, վոր ընթերցողը, հատկապէս այն ղեպքում, յեթե
նա այս առաջնորդին անգրադառնա վճռանալորների հետ նա-
խորոք ծանոթանալով, այդ յեզրակացութիւնը արդեն արած կը
լինի:

Սարիւրի մոտ, վորը յետ չեր ֆնում իր ժամանակի հասա-
րակական կյանքից, գոյութիւն չունի հարկավոր մտածված վե-
րաբերմունքը ղեպի իր իդեալը, ղեպի այն ճանապարհները վո-
րոնցով կարելի եր հասնել նրան և ղեպի այն հասարակութիւնը,
վորին հարկավոր եր քանդել:

Իր աշխարհայացքի կազմակերպման ու ձևակերպման մե-
թոդներից չազատագրվելու համար, նրա սոցիալական քրեդոն
ակամայից կրում եր ուտոպիկական բնույթ:

Ծաղրը (մասնավորապէս գրական յերգիծանքը) շատ ուժեղ
բան ե և Սարիւրը յերգիծանքն եր ընտրել վորպէս ուղիղ ճանա-
պարհ ուղղելու իր ժողովրդի պահանները: Նա այդ ուղղութիւնը
ավելի յե արել, քան իր ժամանակի սոցիոլոգները, վորոնք վեր-
ցրել են այլ կուրս: Այժմ մենք վստահ կարող ենք ասել, վոր
նրա յերկերը կարգացող հասարակութիւնը, ծիծաղելով ծիծաղե-
լով՝ շտկում ե յուր պահանները:

ԹԱՐԳՄԱՆՉԻՑ.

ՍԱՅԻՐԻՆ

Վոնց վոր անապատ—մի տեղ ջրի հոր՝ փորված ես, Սարիւր,
չենց խուլ ու խավար ճամփեքում մի լուս՝ վառված ես, Սարիւր:

Շերտ ու շերտ ընկած անլիզու խալխի լիզուն ես, խիղճը,
չենց մեղք ու աղիղ քյասիբի համար երված ես, Սարիւր:

Կրակ ես ելի, քյասիբի դարդը սրտումդ՝ խորով,
չարուստը քոքից կարելու սիրով, լարված ես, Սարիւր:

Քեզանից հետո կֆնա մի դուռ ու մի ճանապարհ,
Բարեբարութիւն գտնելու խելքով, տարված ես, Սարիւր:

Ազգերը հիմի, մեկ են, հոգի ջան, նպատակը մի,
Կոիվ են գցել, վոր տիղ ու ազրուկ արուն չքամի.
չալալ քրտինքը իշխան ա հիմի, տիղը հարամի...

Վեր, կաց, տնաչեն, հազար հազար տեղ, սիրված ես, Սարիւր:

ԲԻՆԵԼՄԻԼԷԼ*)

Ձե՞ վոր հիմի, մեր դարում, պիտի ապրել միաբան,
Յե՞վ մեր միջև կովելու՞ ամենեկին չկա բան,
Ձե՞ վոր մեկ է մեր վիճակ, մենք բաղդակից ու նման,
Ու ինչո՞ւ մենք հայ ու թուրք՝ դեմ ենք իրար ու դուշման.
Մենք միեկունս աշխարհի, հայրենիքի վորդիներ—
Մի՞թե չկար ու մի մարդ՝ ուղիղ ճամբի մեզ դներ:

Ո՞վ կա գիտուն, դժու եկեք, քարոզելու ժամանակ է,
Խալիսը յուր, գցելու, բարըշելու ժամանակ է:

Յերկու ընկեր՝ մի տեղից, հին ու ազիղ հարեան,
Վոր քանի դար միատեղ հաց են կերել միերեան,
Հիմի հանկարծ գազազել, վսիս են պահում հարամի.
Տգեա խելքից մեր աշխար դուլում, ավեր է հիմի:
Շեյթանի մասն է ետեղ,—խառնակում է մարդամեջ.
Յաման աստված, արուն է, գեղ ու քաղաք ծխի մեջ:

Ո՞վ կա գիտուն, դժու եկեք, քարոզելու ժամանակ է,
Խալիսը յուր գցելու, բարըշելու ժամանակ է:

Ձեա իմանում, վորտեղից մուրվեցին մտքերը,
Մի՞թե ազգը պատճառ է՝ ջուղկն հայեր—թուրքերը,

*) «Բինեմիլե» — նշանակում է միջազգայնություն: Մարերի այս տեր-
մինը թուրք զրահանություն մեջ այժմ ստացել է «ինտերնացիոնալ» իմաստը:
Մ. Թ.

Մի՞թե մարդու գործ է սա, ասեք, ինչպես հավատամ,
Քանի վոր մենք ախմար ենք՝ մեզ էլ հիմար դաս պիտ տան:
Թ՛չնամություն ու վրեժ, չորս կողմ արյուն, ավերած,
Զուլումն եկավ մեր խելքից, մենք տգետ ենք, մուրված:

Ո՞վ կա գիտուն, դժու եկեք, քարոզելու ժամանակ է,
Խալիսը յուր գցելու, բարըշելու ժամանակ է:

Պիտի ասել դրուստը՝ արար աշխար լուսանա,
Պիտի բացել աչքերը՝ խալիսը ճամփեն իմանա,
Պիտի ջնջել սրտերից, վրեժի ցասում ու կրակ,
Ու խափանել չարիքը, վոր մեզ արավ խայտառակ,
Խաղաղ ու հաշտ ապրելու պիտի գտնել ճանապար,
Բինեմիլե, ո՞վ Մարեր, չկա ուրիշ ճար—հնար:

Ո՞վ կա գիտուն, դժու եկեք, քարոզելու ժամանակ է,
Խալիսը յուր գցելու, բարըշելու ժամանակ է:

ՔԵԶ ՄԱՐԴ ԵՍ ԻՄԱՆՈՒՄ

Ազնի, փանելա, քո սև ուրը, հենց իմացար մի կլանք ա,
Դուն ել մարդ ես,—մարդ լինելը հենց իմացար հանաք ա:

Մարդը են ա, վոր փող ունի,—ինչ մարդուն վայել ա,
Մարդը անուն ու հող ունի,—ինչ մարդուն վայել ա,
Քեֆ ե քաշում՝ միջոց ունի,—ինչ մարդուն վայել ա:

Քո կերածը ազ ու թեփ ա, հենց իմացար կարմզ ա,
Ախմախի մեկ, մարդ լինելը, հենց իմացար հանաք ա:

Փահլանն ո՞վ ա՞ մարդամեջ գա, փահլա յես՝ տազ արա,
Քեզ մի գցի մարդահեսար, մեյդանը բաց արա,
Հարուստի մոտ խոնար կանգնի, սիրտդ լաց—թաց արա:

Հարուստի հետ, փահլա մարդը հենց իմացար վոր ջո՛ւխտ ա,
Ախմախի մեկ, մարդ լինելը, հենց իմացար նոր ձե՛խտ ա:

Աղքատ մարդունն ո՞վ ա տվել զիվան կամ դադաստան,
Աղքատների դասը ջոկ ա, ի՛նչ փլան, ի՛նչ փստան,
Փող վոր չունես՝ շնորքդ հեչ, չունիս դու ապաստան:

Անկարելի ասած բանը հենց իմացար դոտանրկ ա,
Ախմախի մեկ, մարդ լինելը, հենց իմացար հանաք ա:

Չարուչդ սո, վեր կաց գնա, սող ուրը դու բանի,
Ես աշխարքը բաժանված ա, դու զահլա մի տանի,
Հարուստ մարդը իր դովաթից, քեզ բաժին չի հանի:

Վստիու զեզ կա, քո գրոշը հենց իմացար, վաստանկ ա,
Ախմախի մեկ, մարդ լինելը, հենց իմացար հանաք ա:

Փողը մերն ա, հալբաթ փառքը, մեծությունը մերն ա,
Հողը մերն ա, հալբաթ տուրքը, լիությունը մերն ա,
Դիրքը մերն ա, խոսքը մերն ա, տերությունը մերն ա:

Ամեն քոտո՞ խանի նման հենց իմացար կրանկ ա,
Ախմախի մեկ, մարդ լինելը հենց իմացար հանաք ա:

Դու փահլա չես, իսկ հարուստը հարուստ ա, իմացի,
Մենք ենք տալիս քո շատ ու քիչ ապրուստը իմացի,
Ծնած որից մերը եզ ա, դու գրուստը իմացի:

Քո երեսի թուր ու մուրը հենց իմացար մի փանք ա,
Ախմախին մեկ, մարդ լինելը, հենց իմացար հանաք ա:

Վոչ բեզարում, վոչ ամաչում,
Բնկել ես զուր աստծու փեշ,
Տանն ել նստած որ ես մաշում:



ԲԱԳՎԻ ՓԱՀԼԱՆԵՐԻՆ

Բաղդի անիվն են չի, շուռ ա եկել հիմի,
Ու փահլան ել մարդամեջ ա ընկել հիմի:

Ախր ինչի՞ իրա խոսքը ասի փահլան,
Կամ թե որենք ու իրավունք ուզի փահլան,
Փահլան հիվ ա, վոր խառնվի ամեն բանի,
Փահլան պիտի գլուխը քաշ գնա բանի:

Բաղդի անիվն են չի, շուռ ա եկել հիմի,
Ու փահլան ել մարդամեջ ա ընկել հիմի:

Փահլան, ասան, ինչի՞դ համար պատիվ տան քեզ,
Ձեն ես հանել՝ դուն ես սուտը... դատի տան քեզ,
Հսիր, բալա, փող ու պատիվ հարուստին ա,
Հարուստը քեզ ինչ ել կտա՞ դու գոհ մընա:

Բաղդի անիվն են չի, շուռ ա եկել հիմի,
Ու փահլան ել մարդամեջ ա ընկել հիմի:

Հարուստի հետ գլուխ մի դիր շառը շատ ա,
Աղքատ մարդը ինչ էլ ասի՝ ախանջ մի տա.
Աղքատի հետ քեզ մի՞ դնի մեկ—բարեբար,
Անգրբուխի, անվտտի հետ՝ վոչ տուր, վոչ առ.

Բաղդի անիվն են չի, շուռ ա եկել հիմի:
Ու փահլան ել մարդամեջ ա ընկել հիմի:

Գու մի խափվի, փահլան հեչ ա, խելքը պակաս,
Փահլան չունի հարստութուն, քուրք ու առլաս.
Մարդավարի մի հատ խալաթ չունի կարգին,
Ամառ, ձմեռ հենց մի փալաս ունի հագին:

Բաղդի անիվն են չի, շուռ ա եկել հիմի,
Ու փահլան ել մարդամեջ ա ընկել հիմի:

Թե ուզում ես, վոր դինջ մնաս ես աշխարում—
Ղալմաղալի չմոտենանս ես աշխարում,
Քյասիր մարդուց հեռու կենաս ես աշխարում.
Գլխիդ խաթա չկամենանս, ես աշխարում.

Բաղդի անիվն են չի, շուռ ա եկել հիմի,
Ու փահլան ել մարդամեջ ա ընկել հիմի:

Խալխի դարդը իրան մնա, դու սուս արա,
Հենց քեզ համար քո ոջախը դու լուս արա,
Գու քո տանից, յեթիմներից ձեռ մի քաշի,
Քո բանը չի ուրախութուն,—մի ել հիշի:

Բաղդի անիվն են չի, շուռ ա եկել հիմի,
Ու փահլան ել մարդամեջ ա ընկել հիմի:

ՅԱՎ ՈՒ ԿՐԱԿ ՈՒՏԵՍ, ՓԱՆԿԱՆՈՒՄ...

Ի՞նչ էս ի դուր մեջտեղ ընկնում, ի՞նչ ա քո ուզածը փահլա,
Յավ ու կրակ դառար ելի... ի՞նչ ա քո սասածը, փահլա,

Մինչև մեկը քեզ չբզի՞ դու քո ճամփեն չես իմանա,
Կիցկվես մի բաշ գալը՝ դու քո չափը չես իմանա,
Խանի կուշար լեզու կտաս, քո ջուզարը չես իմանա.

Եդ վճր որից դոչադացար, ի՞նչ ա քո կերածը, փահլա:

Հենց անզգամ փշի նման փաթաթվում էս մարդու վոտին,
Մի քեզ մտիկ, եդ քո ուխտին, քո փալասին ու քո հոտին,
Դե վեր ընկի, մի երես, ամոթիցը մտի գետին:

Չալման գիտես, — յերա տիկ ա, քո գլխին դրածը, փահլա,

Սրան մտիկ, սրա ուխտին, սրա բրդած գրաբառին,
Մարդու սիրտը վեր ա գալի՝ թե սլատանի ճանապարհին,
Վորդից բերին ու վեր գրին մեր աշխարը էս մուրտառին.

Ո՞վ իմանա՞ ի՞նչ տեղից էս, վճր քամու բերածը, փահլա:

Առաջներում աղաթը կար ու քյասիրն եր ամաչկուտը,
Քյասիրն առաջ ճամփա կտար, գլուխ կտար բեզի մոտը,
Պատկառանքով կկռանար մինչի գետին խանի վոտը.

Եդ վճր որից յերես առար, ի՞նչ ա քո արածը, փահլա:

Հիմա ուրիշ ժամանակ ա, հիմա ուրիշ գաղափար ա,
Տրեխներով մեջտեղ յեկել՝ թե աշխարը բարերար ա,
Վճրց թե բռն մեզ հետ նստի, ո՞վ կթողա, ի՞նչ խարար ա.

Դու լավ իշտան ունես, դյադան, ի՞նչ ա քո փչածը, փահլա:

Ադան, փահլա, դու քո որը շինի ամիս, հեսարը տես,
Գնա գտի քեզ նմանին, հետը նստի, քո չափը տես,
Ով աշխարքից դատարկուն ա՞ դու նրա հետ քո կապը տես,

Հիմի խալիսը վեր ա կացել, յաման էս, քոքածը, փահլա:

Ասում էս թե՛ յես ել մարդ եմ, բա ռւր ա քո բաղ ու բախչեն,
Եդ ի՞նչ տեսակ զարգացած էս, վոր չտեսանք քո խալիչեն,
Թե դու մարդ ես՝ հողեր ունես, ճորտեր ունես՝ վոտդ պաչեն,

Ո՞ւր ա քո խաս շալ ու կապան, լաթ ա քո հագածը, փահլա:

Եդ վոր մեծ մեծ բրդում ել ա՞ քո տեղը, բաղմոցը ուր ա,
Վորտե՞ղ են քո նոքարները, քո «Սոնիչկա» քո՞նք ռւր ա,
Դինի խմող ընկերներդ, քո սեղան սիւռոցը ռւր ա.

Մի թաս խմես՝ սաղ շարաթը չես տեսնի սե հացը, փահլա:

Քեզ վոր ասոված ստեղծել ա՞ թուր ա քսել քո ճակատին,
Ասել ա քեզ՝ գեհնի խմի, սատկես, հարամ լինես կաթին,
Ենդուր բաղը բաժանելիս, ախանջ չարեց քո գանգատին:

Ձեռքդ դատարկի,—հազիրվ մեկ ասքո յեղած չեղածը, փահլա,
Ղալաթ չանեսս,—եւ դուս չտաս գլխումդ եկածը, փահլա,
Եւ մի կենա աչքի առաջ, այ գետին մտածը, փահլա,

Ռ Ա Ն Չ Պ Ա Ր

Ի՞նչ ես ձենդ գցել, ադա, ա՛ն ունչպար:
Մի՛ ձեանա աղքատ, հայդա, ա՛ն ունչպար:

Իսկի ամոթ, ապուռ չունես, պատել ես իմ դուռը,
Բարի լուսին, թե իրիկուն, կապել ես իմ դուռը,
Հենց մի գլուխ փնդստում ես, կպել ես իմ դուռը,

Բոլ աս, ի՞նչ ես ուզում, մուրտնո՛ւ, ա՛ն ունչպար,
Ձենդ կտրի, գահլա մի՛ տար, ա՛ն ունչպար:

Տարին վատ եր, մի հատ ցորեն չհասավ, իմ ինչ բան,
Մուկը կերավ, բաղ ու բոստան չորացավ, իմ ինչ բան,
Վերան ելար, քո ջուխտ աչքը քոռացավ, իմ ինչ բան,

Ինձ ի՞նչ վոր քո բանը ձախ աս, ա՛ն ունչպար,
Թող քո հոգին դուս գա, հախ աս, ա՛ն ունչպար:

Պետութունը տուրքը, խարջը առել աս, մեղ ինչ,
Պարտատերը քո լծկանը տարել աս, մեղ ինչ,
Կրակն ընկել, քո տուն տեղը վառել աս, մեղ ինչ,

Հոգիդ ծախի, բեր իմը տուր, ա՛ն ունչպար,
Դե ուղ ելի, շատ դուս մի՛ տուր, ա՛ն ունչպար:

Իմ ինչ բանը՝ թեկուզ սատկես, ել չկամ աշխատող,
Ջահաննամը թո սոված ես, ինձ պետք ա փող ու փող,
Ինչ վոր բանի՞ բերես կտաս, աչքդ ել դուս գա թող.

Ի՛մն ա հողը, ի՛մն ա բերքը, *ն* ոանչպար,
Թե չես ուզում նստի բերդը, ա ոանչպար:

Քանի կուզես՝ դու աղաչի, յես իմը կտանեմ,
կուզես հալի, կուզես՝ մաշի. յես իմը կտանեմ,
Քեզ կքերթեմ, իմ բանը չի, յես իմը կտանեմ.

Ղամշու համը լավ իմացի, *ն* ոանչպար,
Գլխիդ գալը լավ մտածի, *ն* ոանչպար:

Դո ինչ մարդ ես, վոր ջուր խմես, քեզ լակը դեռ շատ ա,
Հացը վորն ա, քեզ կրծեւո՛ւ տախտակը դեռ շատ ա,
Դու վոր մի հին, փալաս գցես քո տակը, դեռ շատ ա.

Քո ինչ բանն ա միս ու յեղը, *ն* ոանչպար,
Հայվան, մսուրն ա քո տեղը, *ն* ոանչպար.

Բեզգադա յեմ, իմ սուրբը շախով ա, լազաթ ա,
Ես աշխարքը իմ քեֆով ա, իմ ջուրը շարբաթ ա,
Առանց գինու հաց չեմ ուտի, ինձ համար աղաթ ա.

Յես բեզ մարդ եմ, ու բեզգադա, *ն* ոանչպար.
Իմ պատկերը դե տես, եզ ա, *ն* ոանչպար:

Մ Ի Ք Չ Ք Չ Ա, Ք Ն Ի . . .

Մի քչքչա, սոված հալ, երագումդ հաճարը տես,
Մճա... արծիվը ման ա գալի, խեղճ անասուն, ճարը տես.

Բակը լին ա, կուտը շատ, պտուտ գալու անուշ տեղեր,—
Մեկ ել մտիկ են դանակին, աբունաշերտ փառը տես:

Ջու յես ամել, քո խելքով հենց իմացար, թուխսը մճո ա,—
Ջվածեղդ ինչ եփել են, համով շինած պատառը տես:

Քանի կուզես՝ կըռթ կռթա, զանգեղուրցի սովածի պես,—
Բեզի, խանի խորտիկ ես միշտ, դու մեկ ընձա, կաշառը տես:

Մի հավատա, *ն* բալա, «յես եմ ու յես» ասողներին,—
Քեզ կտանեն կախելատեղ՝ մտիկ, նրանց պարը տես:

Կզան գլուխ կյեղեն, քաղցր, անուշ քարոզներով,—
Երեսներին դու մի աշի, մեկ ել նրանց աստառը տես:

Յերը կտանես աղա մարդ, դուն ել կարոտ ու զարդիման,—
Հենց պատանքդ հաղիբ արա, գերեզմանիդ քարը տես:

Ինտելիգենտ մարդ ել կա, ասածները գցի քամուն,—
Դրանց տեղը սրճարանն ա, գնա բռնած զառը տես:

Պալիտիկա, կարյերա,— դրանց մտիկ վտից գլուխ,
Մենակ դադարկ խոսել զխոսն, խերը քիչ ա, շառը տես:

Մ Ե Ձ Ի Ն Ձ...

Տարին սով ա, ի՛նչ անենք... խալխը՝ կարոտ, անճար,
մեզ ի՛նչ,

Մարդ կա չունի կտոր հաց, մնացել ա շվար, մեզ ի՛նչ:

Մեր ապրանքը գտած ա,—ով պատահի պցենք բերան,
կոստացե՛լ ենք, թե ի՛նչ ա,—բաժին անենք սրան, նրան.
Մենք ել ունենք յերեխա, պխտի պահել շախ ու նազով,
Անջախ թե մեզ մտիկ տանք, անջախ ապրենք մեր
մուրազով:

Բուք ու բորան, թե պատի՛ վորբի գլուխը քար, մեզ ի՛նչ,
Մարդ կա չունի կտոր հաց, մնացել ա շվար, մեզ ի՛նչ:

Եզ ի՛նչ տեսակ խելք պխտի, վոր մենք դադենք, շինենք
փարա,

Տանք՝ փուչ տեղը գխկըվի գանգեղուրցի մի ալարա,
Մեր ի՛նչ բանը՝ մտածենք, թե մարդ ել կա՞ մեղք ու
նաչար,

Սիրաը ճարի թե չունի, գնա սատկի թող չարեչար

Ախ ու վախով որ ել կա, մարդ կա՞ չունի դադար, մեզ ի՛նչ,
Մարդ կա՞ չունի կտոր հաց, մնացել ա շվար, մեզ ի՛նչ,

Ձոռի բան չի, այ մուլա*), գլուխներս շատ մի տանի,
Քո քարոզը քեզ մնա, ո՞վ ա գիժը՝ մտիկ անի,
Ինչներին ա Ձանգեղուր, չենք ել ասի՝ սո՞ղ են, մեռած,
Սառը սարում սատկողը, թող որ առաջ մնա սանած:

Բաղդի բան ա, չհասան՝ մինչև բացվեր ամառ, մեզ ի՛նչ,
Մարդ կա չունի կտոր հաց, մնացել ա շվար, մեզ ի՛նչ:

Դու մի ասի, ազիզըմ, մենք լավ գիտենք դրանց խաղը,
Ամառը սաղ, տեսել ենք, ման ենք եկել լիքը բաղը,
Առել ենք մեր բաժինը, մնացածը թափել գետին,
Ձմեռ թիֆլիս կգնանք, իշտան ունենք մեր պալատին:

Ձանգեղուրը ձնի տակ թե գտել ա ծվար, մեզ ի՛նչ,
Մարդ կա չունի կտոր հաց, մնացել ա շվար մեզ ի՛նչ,

Հիմի դրանց տուն ու տեղ՝ թողել աժեր ու բրիչակ,
Քեֆ ենք անում մեզ համար, մեր տներում՝ ծանր, բարակ.
Մեր «Սոնիչկեն» գտել ենք, հին ու նախշուն սիրեկանը,
Վառել ենք ջահ ու կրակ, փռել մեր սարք ու սեղանը:

Ձալխի**) մոռը հանգել ա, տանը ցուրտ ա, խավար, մեզ ի՛նչ,
Մարդ կա չունի կտոր հաց, մնացել ա շվար, մեզ ի՛նչ:

*) «Մուլա Նասրեղիին» — յերգիծաբանական թերթ:

**) Ձալխա — թուրք հասարակ կնիկա սնունդ:

Հ Ա Ր Ց — Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Բ ա ն մ ի խ ո ս ի — հրաման քեզ, լեզուս կծկեմ.
Բ ա ն մ ի լ ս ի — ա կանջներս լավ կխցկեմ.
Բ ա ն մ ի տ ե ս ն ի — հրաման քեզ, աչքս կապեմ.
Մ ի ծ ի ծ ա ղ ի — դառ արտասուք յես կթափեմ.
Մ ի հ ա ս կ ա ն ա — եղ մեկը չե. մի ստիպի,
Ք ո ուզածը գլխից վեր ա, ուժ չի պատի.
Վ ճ ն ց կլինի չհասկանալ, եզ ինչ խոսք ա.
Մարդուն դադեն, դնեն խաշեն՝ բա նա չզգամ.
Բ ո լ ա ելի, ինչ ես կպել դու իմ ջանը,
Թ ո ղ շ ու ը ն ջ ք ա շ ե մ, քո ա կանջն ել կղինջանա:

Ե Ն Ի Ն Չ Ե Յ Ի Ր Ա Ն Ո Ւ Մ, Ա Ս Տ Վ Ա Ց . . .

Մարդու սիրտը թե քար պիտեի՝ են ինչ էյլը անում,
աստված . . .
Սառը արուն, սառը սրտեր՝ ել ինչ էյլը անում, աստված . . .
Քանի ամոթը վերացավ, խալխը ճկեց վիզը գետին,
Թե վոր հոգին չարքաշ պիտեի՝ ել ինչ էյլը անում,
աստված . . .
Ո՛ւր ա հիմա անկեղծութուն, բարին ուզող ո՛վ ա հիմի,
Ժամանակը թե վոր վատ եր՝ են ինչ էյլը անում,
աստված . . .
Թե վոր խեղճի արտասուքը դառնալու յեր անհատակ ծով,
Են անհատակ ծով ու գետեր՝ ել ինչ էյլը անում,
աստված . . .
Թե վորսկանը իրա որում, գութ ասածը չեր իմանա,
Բա յեղնիկը մեղք ու անտեր՝ ել ինչ էյլը անում,
աստված . . .
Բազի, արտի բարբաթը, թե վոր բեզը պիտի ուտեր,
Բա ցանողը՝ քար ու փէտ եր, . . . են ինչ էյլը անում,
աստված . . .

Աշխատանքը ոնչպարին ա, ուժը՝ յեզան, հողը քոնն ա,
Բեզգաղաներ, խան ու բեզեր՝ ել ինչ եյիր անում,
աստված...

Տգիտություն ու խավարը, սաղ աշխարը թե կը պատեր՝
Են սրտացավ, գրքի մարդեր, ել ինչ եյիր անում,
աստված...

Սյուրտուկավոր մուսուլմանին թե կտային քաֆիր անուն,
Թե «Դոշտիկը»*) պիտի աղթեր՝ են ինչ եյիր անում,

Թե պատիվը, թե խոսալը թե վոր քոհնա մարդկանց
պիտեր,
Մի երկու ջուխա բանագետեր՝ ել ինչ եյիր անում,
աստված...

Թե վոր սրտով գործի կպած, եսքան լրտես ու չար պիտեր,
Բա սատանեն ինչի՞ հետ եր... են ինչ եյիր անում,
աստված...

Թե վոր տղեն տղի համար կնիկություն պիտի աներ,
Բա աղջիկը տանու պստ եր, են ինչ եյիր անում, աստված...

Թե մեր ամեն վաճառական մի «Սոնիչկա» պիտի գտներ,
Բա «Թեքիզը»**) հենց բերանխտ եր... են ինչ եյիր անում,
աստված...

Տեր վողորմած, տեր վողորմած, տեր վողորմած,
Քու գործերով, հիանում եմ բերանարաց...

*) Դոշտիկ - թրքական աղգային ֆրակ:
**) Թուրք հատարակ կնիկ անուն:

Ծ. թ.

Մ Ա Ր Դ Ի Կ, Մ Ա Ր Դ Ի Կ...

Մի գիթ սատանա ասաց, ես ա ձեր աշխարը, մարդիկ,
Միթամ գիտուն եք, ցրիվ եք տվել խավարը... մարդիկ:

Լսողը ո՞վ ա, ասողը ո՞վ ա, քարոզողը ո՞վ:
Միթամ չգիտե՞ք՝ գրգելով ա ձեր արարը... մարդիկ:

Գիրք ու գիտություն թե են հասարակ խալխի ձեռը տան՝
Ձե՞ վոր են վախտը մոլլան կմնա անփառը... մարդիկ:

Բռնակալները մի՞թե կուզենան, վոր խալխը զարթի,
Ես բանը մի՞թե՞ կթողան մարդկանց մի շարը... մարդիկ:

Հիմի ունչպարը որենք ա ուզում, իրավունք ու դատ,
Ոսաներ ու բեզեր, վորտեղ ա հիմի ձեր թառը... մարդիկ

Գրողներին ել բեզարել չկա, մենակ թե մրեն,
Հենց փուչ ու զարգակ, գտել են իրենց հնարը... մարդիկ:

Չիմանամ՝ չարից թե ձևոք եք քաշել, բարի կամեցել,
Ապա՞ ձեզ տեսնեմ, կտրեցեք իրար կատարը... մարդիկ:

Արուն թ սիեղը ձեր բնության մեջ խոջ ու հալալ ա,
Ախր մարդ եք Կ. սատանեն մեղք ա, հենց գառը... մարդիկ:

Ափսոս չի՞ միթե, ժանգ ու խավարը հանեք սրտերից,
Ինչի՞ ամեն որ արուն չթափի վարարը... մարդիկ:

Ձեր յետը միշտ ել բզում ա, ասում՝ «սպաներ զիրար»,
Դե, գլուխ կտրեք, Բնչ եք մնացել շվարը... մարդիկ:

Սև տգիտության քողը մեք հանի, թե չե՝ կտեսնեք—
Վոր չկան ձեր ու սատանի միջև են սարը... մարդիկ:

Շ Ի Վ Ա Ն

Եսքան սովը տարածին ինչի՞ պիտի մենք տանք յարար,
Ի՞նչ խարար ա սովածին մենք տիրական դատնանք, յարար:

Հոգին դուս գա սովածի, մնա՞ ձեռը յերեսին,
Գնա բանի չարեչար, ձեռը դնի յերեսին,
Հաց ա կերել Բնչ ոգուս, մընա գեանի յերեսին.

Թե վոր սատկի, հո լավ ա, կասենք, մի բաշ պրծանք, յարար:

Ականջս շատ միք տանի, մթամ խալխը սոված ա,
Սովը տանի-սովածին, գերեզմանը փորած ա,
Պարտական ենք, թե Բնչ ա, խելքի տերը աստված ա.

Սալխի դարդը մե՞զ տվին, նրա տեղը մենք լանք, յարար:

Ես անիծած գաղեթը՞, դառել ա թամուղ խաթա,
Տալիս են ձենը ձենի, չեն ասում, սնուտ ա, դժբթ ա,
Թե՞ հայ, հարայ, ս՞վ ունի՞ սովածներին բերի տա:

Գտած հո չի՞ մեր փողը, վոր հասածին հոգանք, յարար:

Ախր քեզ ինչ, անաքանդ,*) խալխի համար մեռած ես.
Մթամ խալխը քո Բնչն ա, վոր եզ զազար երված ես,
Փողը երկու աչքըս ա, վճնց կլինի դեն ածես.

*) Սոսքը ուղղում ե «Մուլա Նասրեղղին» թերթին:

Թե հասածին բաժանենք, բա մենք անփոփոջ մնանք, յարար:

Ինչի՞ պիտի տկլորը մեր փեշիցը մնա կախ,
Ջահաննամը սոված ա, թող գրակը հանի ծախ,
Ել փող տալու տե՞ղ չկա՝ փողս քեզ տամ, սո ախմախ.

Նվեր տալու քիչ տեղ կա՝ ենքան կաշառք, բախշանք, յարար:

Քիչ խոսա, այ գազեթչի, տեղը գտի, նոր կծի,
Փեշակ չունես, թե ինչ ա, մեզ ել շառով մի գցի,
Մենք վոր փողը խալխին տանք, բա «սոնիչկեն» ինչ սսի.

Հո «սանամը»*) չի՞ նա յեյ, վոր գոնե դուռ թողանք, յարար:

*) Սանամ—թուրք հասարակ կնկա անուն:

Ա. Ղ. Ք Ա՛՞՞.

Ռնդ ելի գնա, հերիք ա զուսս զուանս, աղքատ,
Բայդուշի նման լաս ու կոկոսս զուանս, աղքատ:

Մեր ես ժողովը թեև կոչվում ա բարեգործական,
Քեկեխի համար թեև դարսած ա հազար ու մի բան,
Թեև բոլորը աղքատահաց ա, աղքատի սեղան—

Բայց մենք ել ունենք մեր հին ազաթը, իմանաս, աղքատ,
Ռնդ ելի գնա, հերիք ա զուսս զուանս, աղքատ:

Մենք ունևոր ենք, մեզ նման մարդիկ զվարճասեր են,
Մեր գոնաղները բոլորն ել փողի, պաշտոնի տեր են,
Բոլորն ել ազնիվ ու ազնվական հաստավզեր են,
Մոլլա մարդիկ են ազոթաբերան, խան ու բեզեր են,
Մեր կերածները հազար տեսակի անուշ մրգեր են,

Աչքդ մի չոի մեր խոհանոցը, քոռանաս, աղքատ,
Ռադ ելի գնա, հերիք ա զուսս զուանս, աղքատ:

Մեր ինչ հաշիվը՝ թեկուզ կրծոտես սովից յեղունգը,
Վոր սովածությունից դառել ես դեղին մի կտոր խունկը,
Մտիկ... մի մտիկ եզ քո գզվելի քիթ ու պուունգը.

Յնիկ, թյո՛ւ... յերեսիդ, մուրտառ տեղովդ չորանաս, աղքատ:
Ռնդ ելի գնա, հերիք ա զուսս զուանս, աղքատ:

Ունենոր մարդը ինչի՞ աղքատին կտա ուտելու,
 Քանի վոր աղիզ իշխանավորի նվեր կա տալու,
 Բա եղբան յերես դնել կլինի, գետին մտնելու.

Դե, ձեռք քաշի, բոլ ա յախիցըս կախ մնաս, աղքատ,
 Ռադ ելի գնա, հերիք ա զուսս դռանս, աղքատ:

Վերջը, մի անգամ գոնե հասկացի, վոր դու աղքատ ես,
 Վոր մեր կերածը, ամանը ջոկ ա, չպիտի մատես,
 Թե վոր ուտելու բան չունես՝ մեռի... հողիդ կազատես.

Հերիք ա ինչքան մեղ ել տանջեցիր, վերանաս, աղքատ,
 Ռադ ելի գնա, հերիք ա զուսս դռանս, աղքատ:

Ունենոր մարդը աղքատների հետ չի գա բարերար,
 Ախր, ինչ ունի, վոր ասի՝ յես ել մարդ եմ ի
 Վճնց թե բարերար... բա եղ պատժվ ա հարուստը համար.

Եղ խելքդ փուչ ա, մտքիցդ հանի, մոռանաս, աղքատ,
 Ռադ ելի գնա, հերիք ա զուսս դռանս, աղքատ:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

յերես

Կենսագրություն	7
Թարգմանչից Սարիբին	13
Իննկլմելի	14
Քեզ մտրդ ես խմանում	16
Բազվի փահլաներին	18
Յավ ու կրակ ուտես, փահլա	20
Ռանչպար	23
Նրա, քնի	25
Մեղ	26
Հարց — լատասխան	28
Են ինչ կյիր սնում, ասոված	29
Մարդիկ	31
Շիվան	33
Աղքատ	36

Ա. Կ. Կ. (բ) Բ. Կ. Կից

«Քակինսկիյ Բարոշիյ» կոստերատիվ հրատարակչության կողմից շուտով լույս կտեսնեն հայ և թուրք գրականության նշանավոր ներկայացուցիչների յերկերից նմուշներ թարգմանաբար:

Հայերեն լեզվով

- 1) Սերգ-Ազիմ Շիրվանի, բանաստեղծութուններ, թարգմ. ~~Մ. Կ. Կից~~ (լույս տեսավ):
- 2) Սարիր, Հոսկ-Հոսկ Նամե, թարգմ. Ամեռի:

Թուրքերեն լեզվով

- 1) Թումանյան Հովհաննես, ա) Մի կաթիլ մեղր. բ) Գիրքը թարգմ. Ալի-Աժդար Սեյդյեվի, (լույս տեսավ)
 - 2) Սունդուկյան Գաբրիել, Պեպո, թարգմ. Աբդուլ-Րահիմ Ախվերդովի:
-

« Ազգային գրադարան



NL0385937

73.877